ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 29/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 30.08.2018թ.ժամը 14.00

Համաձայն, Տիգրան Մուրադյանի, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝15.08.2018թ-ին ստացված դիմումի, քաղաքացի Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ս/թ-ի Օգոստոսի 30 -ին ժամը 14.00-ին՝ հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ Տիգրան Մուրադյանը
Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը չէր ներկայացել նիստին

Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանը
Դիմումատու Տիգրան Մուրադյանը պատշաճ ծանուցվել էր նիստի օրվա և ժամի մասին, սակայն չէր ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 15.08.2018թ-ին ստացված, Տիգրան Մուրադյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը, ստուգեց կարգապահական վարույթի կողմերի և հաձնաժողովի անդամների ներկայությունը, այնուհետև հակիրճ ներկայացրեց բողոքի բովանդակությունը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6-րդ կետի համաձայն ձայնի իրավունք տվեց Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ Սարգիս Միրաքյանին, քանի որ դիմումատուն չէր ներկայացել նիստին: Սնանկության գործով կառավարիչը ներկայացրեց Կարինե Չիչակյանի սնանկության վարույթի շրջանակում իրականացված իր կատարած աշխատանքի մասին: 25.08.2016թ. վճռով Կարինե Չիչակյանը

ճանաչվել է սնանկ: Սնանկ ճանաչվելուց հետո Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչՍարգիս Միրաքյանը կատարել է իր լիազորությունները պատշաճ կերպով: Մասնավորապես, պարտատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունները մարելու համար իրականացրել է պարտապանին պատկանող գույքի որոնողական աշխատանքներ: Իր միջնորդության հիման վրա, քանի որ չէր կարողանում գտնել պարտապանին, 10.12.2015թ-ի Գեղարքունիքի մարզի դատարանի որոշման հիքով, ԴԱՀԿ ծառայությունը 23.12.2015թ-ին հետախուզում է հայտարարել պարատապանի նկատմամբ և 09.06.2016թ-ին կայացրել է որոշում կատարողական վարույթը ավարտելու մասին, քանի որ անհանար է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը: Կառավարչը, առաջնորդվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ, 76-րդ հոդվածի պահանջներով կատարել է իր լիազորությունները: ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 14.03.2017թ-ի ԳԴ/0027/04/15 որոշմամբ՝ Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ Սարգիս Միրաքյանի կողմից ներկայցված պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրված և երրորդ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքերը հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու մասին միջնորդությունը բավարարվել է: 22.12.2017թ-ի իրակիանացվել է աճուրդ և գույքը վաճառվել է: Մինչ այդ պարտապանը և երրորդ անձը, որևէ առարկություն, տեղեկություն չեն ներկայացրել կառավարչին: ԴԱՀԿԾ-ի միջոցով էլ չի ստացել որևէ տեղեկատվություն և իրականացրել է կառավարչի համար նախատեսված բոլոր պարտականությունները:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց Տիգրան Մուրադյանի բերած այն փաստարկը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձնաց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրին նոտարին:
Կարգապահական հանձնաժողովի անդամները քննարկեցին հոդվածը և եզրահանգման եկան, որ տվյալ պարագայում առկա է պարտատիրոջ և ժառանգների միջև խնդիր, և կառավարիչը, որևէ տեղեկություն չունենալով գործել է բարեխիղճ: Մինչև աճուրդը երրորդ անձը որևէ առարկություն կամ տեղեկություն պարտապանի մահվան մասին չի ներկայացրել:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը նշեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածը սահմանում է ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականութոյունները: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, որոնք առանձին կետերով սահմանվում են: Այն, որ սնանկությանը վերաբերող պարտականությունները չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ հոդվածում սահմանված չէ, սակայն կարելի է այդ եզրահանգման գալ, քանի որ առանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները և սնանկության վարույթը կարելի է ենթադրել, որ անձի հետ անխզելիորեն կապված է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 434-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝պարտավորությունը դադարում է պարտապանի մահով, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց պարտապանի մասնակցության, կամ պարտավորությունը այլ կերպ անխզելիորեն կապված է պարտապանի անձի հետ: Տվյալ պարագայում սնանկության գործով կառավարիչը տեղյակ պետք է լիներ պարտապանի մահվան մասին, սակայն շահագրգիռ անձնանցից ոչ մեկ, և ոչ էլ պետական մարմին չեն տեղեկացրել նրան այդ մասին:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը, արտահայտեց այն կարծիքը, որ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի առաջին մասի համաձայն ՔԿԱԳ մարմինը մահացած անձնանց անձնագրերը մեկամսյա պարբերականությամբ տալիս է ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանման անձնագրային բաժին: ԴԱՀԿԾ-ի միջոցով իրականացվել է հետախուզում և կատարողական վարույթը ավարտվել է «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ հիմքով, այն է `անհնար է եղել պարզել պարտապանի գտնվելու վայրը: «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված արգելքի վերացման դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին: Վերսկսելուց հետո «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ կետով՝ այն է մահացել պահանջատեր կամ պարտապան քաղաքացին, և դատական ակտով սահմանված պահանջները կամ պարտականությունները չեն կարող փոխանցվել նրա իրավահաջորդին, կատարողական վարույթը կարճելու մասին որոշում պետք է կայացվեր: *ՀՀ Ոստիկանությունում առկա/եթե այդպիսին ՔԿԱԳ մարմինը ներկայացրել է Ոստիկանություն, որը մտնում էր իր պարտականության մեջ/ մահացած անձնանց վերաբերյալ եղած տեղեկությունների հիման վրա ԴԱՀԿ ծառայությունը ըստ էության պետք է վերսկսեր կատարողական վարույթը և կարճեր այն:* Ունենալով գոնե այդ կերպ տեղեկություն պարտապանի վերաբերյալ, սնանկության գործով կառավարիչը կկատարեր համապատասխան գործողություններ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1239-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարտատերերին տեղեկացնելու նպատակով նոտարը մամուլում հաղորդագրություն է հրապարակում ժառանգության բացման վերաբերյալ՝ պարտատերերին առաջարկելով հաղորդագրությունը հրապարակելու օրվանից վեցամսյա ժամկետում ներկայացել ժառանգատուի նկատմամբ իրենց պահանջները;

Տվյալ պարագայում կառավարիչը տեղեկություն չի ունեցել ոչ շահագրգիռ անձնանց կողմից և ոչ էլ պետական մարմիններից որևէ տեղեկություն չի ստացել: Հետևաբար առաջնորդվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրված և երրորդ անձանց սեփականության իրավունքով պատկանող գույքերը հրապակարային սակարկություններով իրացրել է: Ընդ որում դա կատարվել է դատարանի 14.03.2017թ-ի ԳԴ/0027/04/15 որոշման հիման վրա:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը, առաջնորդվելով «Սնանկության մասին ՀՀ օրենքի, «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի պահանջներով, հաշվի առնելով նիստի ընթացքում կատարված պարզաբանումները, մասնավորապես, որ կառավարչի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ, 56-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներին համապատասխան, առաջարկեց կարճել Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյան նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ `

1. Փաստաբան Տիգրան Մուրադյանից, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝15.07.2018թ-ին ստացված դիմումի հիման վրա, քաղաքացի Կարինե Չիչակյանի սնանկության գործով կառավարիչ՝ Սարգիս Միրաքյանի գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով

կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան